

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ ԵՒ ՔԱՐՈՋԷ
ԹՈՐՈՆԹՈՅԻ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ**

Առաջնորդ Սրբազան Հայրը Կիրակի, Յունիս 27ին Սուրբ Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ մէջ Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց: Սուրբ Սեղանին սպասարկեցին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Ջարեհ Աւագ Քինյ. Ջարգարեան եւ Սարկաւազները:

Սրբազան Հայրը խանդավառութեամբ եւ հոգեկան հրճուանքով ոգեւորիչ քարոզ մը տուաւ, ապա արարողութեան աւարտին սրահին մէջ առիթը ունեցաւ անձամբ ողջունելու եւ զրուցելու հաւատացեալներուն հետ, որոնք իրենց ուրախութիւնը յայտնեցին այս այցելութեան համար: